

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(See *j'tk* 397)

ՏՊԱՐԱՆ ԵԼՉՈՒԽԻԱԾԻՆ

U Ե Ր ընթերցողաց արդէն ծանօթ
գաղղիացի սւառցշապեան կարրիէր,
քանի մը տարի յառաջ ներկայացոյց
մեզ՝ հոլանտացի անուանի տպագրապե-
տի մը քոյլ յԱմստերտամ ձուլուած և
տպագրուած հայկական տառից նմոց մը,
փափաքելով զիտնալ թէ որո՞ւն համար եղած
են այն տառից Սորագրութիւնը և ի՞նչ վախ-
ճանաւա : — Մեզի համար կը պակսէր այն
ատեն՝ իր հարցասիրութիւնն զո՞հ ընելու պա-
տասխանին :

Քիչ եւոքը Աղանեան Գիւտ քահանայի և
Երիցեանց Աղեքսանդր բանասիրի ձեռքով
եղած պատուական հրատարակութիւնը՝ հար-
կաւոր սեպուած լոյսը տուին մեզ, այդ իշխ-
որոյ և հարցումի նկատմամբ :

Որչափ ալ զանագան անգամ ազգերնուու
մէջ ապագրութեան բարզաւաճման և հա-
սարակաց ըլլալուն փոյթ, ջանք, գործակցու-
թիւն և պաշտպանութիւն ցոյց տուեր եւ
իջմածնի հայրապետքն, ինչպէս գրուածքիս
համառօտութիւնն ալ ցոյց տուաւ մեզ, բայց
բուն իրենց աթոռասեղին տպարան մը ու-
նենալու յաջողութիւնն ունեցած չին, այն
պատճառաց համար՝ որ արդէն յայնին են
ազգային պատճութիւնն ուսումնասիրող բա-
նասիրաց :

Ենթադրեցին ոմանք թէ կանխազոյն ժամանակաց մէջ ալ տպարանի գոյութիւն և տպագրութիւնը եղած ըլլան յշմիածին ,

այդ սրբավայրին անուամբ յիշրոպա՝ այլիսայլ
քաղաքաց մէջ հաստատուած ազգային տպա-
րաններն , յԱմանկերտամ , ի Մարտիխա և ի
Լիլուսայ՝ շփոթելով և կարծելով թէ բռն
աեղոյն իրայ կառուցուած ըլլան , որ երբէց
այլպիսի հաստատաւթիւն եղած չէ հոն՝ յա-
ռաջ քան զՍիմեոն կաթուղիկոս , որ Էլ-
միամնի հայրապետական աթոռոյն վրայ նստաւ
յամի 1763 :

վասն զի միայն իր ատեն կնմիածնի մէջ
մասնաւոր շէնք մը կառուցուեցաւ, որոյ ճա-
կատուն լիրայ հետևեալ յիշատակարանն գը-
րուած էր.

« Աստուծով հաստատեցաւ տպագրատունն
նոր ի նորոյ ի առլր Ամոռոս Էջմիածին ա-
մենայն պարագայիրէն, հոգաբարձութեամբ
տեառն Սիմեոնի սրբազն կաթուղիկոսին
Երեւանցոյ, արդեամբ Զուզայեցի ի Հինգ
քնակեալ բարեպաշտաւն Գրիգոր աղային Զա-
քիկենց ի յիշատակ իւրեան, և իւր ի Քրիս-
տոս հանգուցեալ ծնողացն Միքայէլին և
Մամիսաթունին, իւր կենակից Մատյինային
և վաղաթառամ Միքայէլ որուոյն, և քերցն՝
Անամարիային և Զիվիտային, հօրեղարցն՝
Եղիսաբէթին, Սաֆարին և Աղեղքոսանքինն,
պապուն Գրիգորին և կենակից Թագուհուոյն,
և հօրաքեռն՝ Զիվագոտային, և մեծապապ
Յակոբըանին, և հաւրեղբօր զատերացն՝ Ուկ-
զատային և Գիւղնաբարձին և այլ ամենայն
հին և նոր ննջեցելոց նորին... Թիվ ԲԱՐԻ »:

Այս արձանագրութիւն՝ որդափ ալ հիմա վերցուած է նոր տպարանին զրան վրայէն, կամ թերեւս սրբի տեղ փոխազրուած, բայց յայսանի նշանակ է թէ յիշեալ թուականին եղած է հաստատութիւնն, և այն հայրապետին օրով որոյ անուն յիշատակուած է յարձանագրութեանն :

Նոյն միջոցին՝ վենետիկ և Պոլիս քիչ շատ գործունէութիւն կը ցուցրէին, տպագրութեամբ թէ եկեղեցական և թէ արտաքին մատենագրութեան երկասիրութիւններ ընծայելով ազգին : Հայրապետական աթոռոյն պատին և պարտք կը պահանջէին՝ որ անոնցմէ յետամնաց շերենայ. մանաւանդ որ երբեմ այնախի երկասիրութիւնը կը հրատարակուէին՝ որ չէին կրնար բար ամենայնի հաճոյանալ աթոռոյն, հարդ համարուելով՝ իր կրօնական ուղղութեան և սկզբանց հաւատարիմ մնալու համար, կերպով մը հակառակի այդ գործունէութեան :

Սիմէոն կաթուղիկոսին ինքնազիր յիշատակարանք ի վերջ իրմէ տպագրուած գրոց, յայտարար հաւասարք և հաստատութիւն են մեր ըստին, և առոն հետեւող պիտի երեւնար՝ սակաւակեացն Արդութեանց կաթուղիկոս, իր եպիսկոպոսութեան տարիներուն :

Հայրապետական աթոռն բազմելէն անմիջապէս երկու տարի եաբը, 1765ին կը գրէր Սիմէոն առ Ղուկաս վարդպապետ, նուիրակ և առաջնորդ Զմիւռնիոյ, թէ յԱմսդերտամբ ազնիւ և ընտիր փորագրութեամբ հայկական տպագրական տառեր կը գտնուէին, զորս Առաքել անունով մէկը շինել տուեր էր, և գործաւորաց պահատութեան պատճառաւ՝ չը յաջողած տպարան մը հաստատել հոն, ինչպէս կը փափաքէր. և կը պատուիրէր Ղուկասո՛ բանակցիլ զրով ընդ Առաքելի, և սաացման զինը յարմարցընելով՝ առնուլ ի նմանէ զտառսն և յիկը առ ինքն յէջմիածին : իր այս նամակին գործացացիչ պատասխան մը ըլնունելով ի վարդպապետէն, միւսանգամ զրեց առ նա՝ թէ ի Զմիւռնիա Մարկոս անունով տպագրիչ մը կայ. խօսի անոր հետ, որպէս զի իր սեպհականութիւն եղող տառերն հետը առնելով՝ ելէ զայ առ ինքն յէջմիածին :

Մենք արդէն յիշատակեր ենք զմարկուածան տպագրատոռն Զմիւռնիոյ, ու հոն հրատարակուած քանի մը զրեցը : Ղուկաս վարդպապետ պատասխանեց, թէ խօսեր է Մարկոս տպագրչին հետ, և թէ չէ կարող նա առ այժմ տպարանը վերցընելի ի Զմիւռնիոյ և զալ յէջմիածին, որով կետեակ վիտաւորութիւն և կամք ունի տպագրել նախ սազմոսարան մը : Դարձեալ կը զրէ հայրապետուն, որ եթէ Մարկոսի գալստեան ժամանակը ձգված է կամքը ձգձրդելը և յապաղումը զրամի համար է, վճարէ ուզած փողը և բռնադատէ զնա փոխադրուիլ յէջմիածին, ուր կրնայ տպագրել իր հաշուին ուզած սաղմոս զիրքը : Քիչ եաբը աւելի խօսաւութեամբ կը կրինէ նոյն պատուէրը :

Ամսներատամի Ցովհաննէս վարդպապետին ալ, որ Ղազար կաթուղիկոսին օրուենէ հոն զրկուած էր՝ իրու ազգային եկեղեցւոյն տեսուչ և հովիւ, կը զրէ և կը բռնադատէ և զի զԱռաքելի զիրն կամ անդ տպարան հաստատել տալ, և կամ առնուզ և ի սուրբ Ամսոն յիկը. իսկ եթէ Առաքելն չտայցէ, և թէ անդ տպարան իցեն հաստատելոց կամ ոչ, նոյն փորագրողին զձեռն մի զիր վասն սուրբ Ամսոնյն փորեցցցեալ յղեցէ : Նոյնը առանձին նամակաւ զրեց և առ Առաքել, առաջարիկելով Ղուկաս վարդպապետէն տանալ կարեոր ծախըն, և և ժաման Մարկոսին եւս ջանալ, և մի ի կողմէ հատանել զրանն՝ մէկի ձեկելով այդ խորհուրդը : Կոռանցնուուպալսէն ալ ծանոյց կաթուղիկոսին իր Մովիկս գործակալը, թէ և ժամն Զմիւռնիոյ տպագրիչ Մարկոսին թէ գտեալ եմք զնարսին յղել այլոր . և հայրապետն զրեց որ փութեան առ այդ, նախապէս խորհրդակցելով բնդ Ղուկաս վարդպապետի :

Վրան տարի մը ժամանակ անցաւ, և կարելի չէր ըլլար ոչ զմին և ոչ զմիւն համոզել, որ իրենց ձեռաց տակ եղած տպարանական ամենայն պարագայլը նուիրեն կամ գէթ վաճառեն յէջմիածին; և Սիմէոն տեսնելով գործոյն անյաջողութիւնը, մտածեց ու առաջ առ իր սեպհականութիւնն :

**

Վենետիկ քաղաքին մէջ հասաւառած ապարաններու վրայ խօսած ատեննիս յիշցինք, թէ Սարաֆեան Սարգիս անունով վարդապետ կամ եպիսկոպոս մ'ալ կար հոն, որ յարելից փոխազրուելով՝ ետևէ եղաւ նաև հայերէն զրբերու հրատարակութեան, մասնաւոր իրեն սեպհականութիւնն եղող տառեր ձուլել տալով. Այդ տառերն, կամ մանաւանդ աննոց հայրերն ու մայրերը հետն տանըլով, ի վենետիկյա անցեր էր ի կոստանդնուպոլիս :

Սարգիս վարդապետ նախկին միաբան մ'էր Էջմիածնի ւ «զիր տպազրական փորազրեցեալ, — կ'ըսէ յիշատակարանիս գրողն, — ի վենետիկ, յոյժ տզնիւ և քաղցրասես, որով զշիքեմրտէս զիրքն տպեալ էր. և պահէր առ ինքն զգիրն, և ոչ ամեր ապայր, և ոչ ինքն զավազրատուն բանայր» : Սիրալիր համակ մը զրեց առ նա կաթուղիկոսն, առաջարկելով որ կամ զրամով, և կամ ի յիշատակ իւր հոգուն՝ նոյն տառերն Էջմիածնի նուիրէ և իւ եթէ կամիցի զայս, կ'ըսէր, որով կերպիւ և իցէ, ծանուսց մերայնոցն՝ որոց և կամիցի ինքն՝ զմիտ իւր, զի գրեսեն ինքեան, և կամ ինքն խօսեցի զրով. և որպէս կամիցի առէ, և ինձ է հաճելի »:

Մի և նոյն ժամանակ վերոյիշեալ մահամեսի Մոլոխիսին, որ ինչպէս ըսինք, թթուոյն գործակալն էր ի Պոլիս, զրեց ու ծանոյց՝ որ եթէ Սարգիս վարդապետ այս խընդդրուն նկատմամբ հեար խօսք բանալու ըլլայ, պահանջած զինը հասկընալով՝ փութայ իմացընել իրեն. և որովհետեւ քաղաքէն արպազրիչ մը 4,500 զահեկան առաջարկեր էր ստացման համար, մինչ Սարգիս վարդապետ 1800 զահեկան զին կը պահանջէր, ինց աշխատի այդ գնէն պակասով ձեռք ձեր, բայց անկէ աւելի զին շմճարել, և նոյն թօսականաւ թօւլթ մ'ալ զրեց առ Զուղայեցի Պռաքել յԱմսկերտամ, պատուիրելով որ եթէ իրեն հաշուին յատով տպարան բացեր կամ բանալու միտք ունի յԱմսկերտամ, Էջմիածնի

համար և հաշուին նոյն փորազրութին՝ իր ու նեցած ամէն զրերէն, ծաղկազրերէն, զարդերէն փորազրել տայ, Ղուկաս վարդապետին ալ իմացընելով իր այս կամբը ի Զմիւռնիս, միւս անգում կը յարզորէր որ ատիպէ զՄարկոս տպազրիչ առնուլ ժողովել իր արուեստին զերաբերեալ ամէն պարազայքը և գալ յլջմիածնին :

Կաթուղիկոսին ոչ մէկ և ոչ միւս կամբն բաղկանըն չյաջողեցաւ, որով առաքելեան տառը մացին յԱմսկերտամ, և Մարկոս տպազրիչ ի Զմիւռնիս :

Ասոր պատճառը կ'ենթազրենք զանել ձեռութեան եղած ազգային ճանապարհորդի մը գուգիթեան մէջ, որ նոյն ժամանակիներն ՅԱմսկերտամ էր. Այդ քաղաք՝ իր երբեմն ունեցած կարեղութիւնն ալ կորուսեր էր մերազգեաց համար, և Յովհաննէս վարդապետին հետ՝ Սիւնեցի մականուանեալ, միայն քանի մը անձինք մնացած էին Էջմիածնի կաթուղիկոսն՝ նկատելով այդ աեղանցն ազգային զաղթականութեան զրեթէ ի սպառանեանալը, կ'ուզէր վաճառել եկեղեցին և անոր ամէն կարուածներն՝ իրու սեպհականութիւն Ոթուոյն, և տիրանալ ստացուածոցը բնականաբար չէր իրնար հաճոյ անցնիլ յԱմսկերտամի ազգայնոց՝ իր այդ կամբն և խորհուրդն. ուստի հարի եղաւ աէրութեան զիմելով՝ խափանել զայն և ինչպէս յաջողեցան :

**

Վերջապէս կրցաւ կաթուղիկոսն հնդկանակ Զաքիկենց Գրիգորի առաստառոր օժանդակութեամբ բանալ տպարանն յլջմիածնին ի 1774 թուի, որուն մատուցած երախայրիկն եղաւ Զրօսարան հոգեռոր կոչեցեալ զրոյի մը, վեշտասան ծալքով ազգիցի մատենիկն : Հետեւեալ տարւոյն, կաթուղիկոսն կը զրէ առ բարերար ձեռնարկութեան. «Իսկ ի կողմանն տպազրատան՝ միամիտ և անհոգ և ուրախ լինիցիս. զի Աստուծով ահա հասառաեցաւ լաւազէս, և օր ըստ օրէ լաւազոյն հասասափ Յառաջադրուն զիփրիկ զրոյի մի ազգից յօրինեալ էի, զոր նորաբանդակ

զրով տպեցաք, և յղեցաք ի նմանէ վասն սիրելոյդ ու 1773ին զրած նամակին մէջ ալ Տաղարանի մը խօսն կ'ընէ, իրբու յառաջազդյն տպուած «Այժմ եւս նոյն աղօթից քոյ զրով վերստին տպել ետու վասն բարոր փորձառութեան գործարանին»։ Ահա երկու հաս եւս ի նմանէ եղաք ի մէջ թըղթոյս և յղեցաք վասն սիրելոյդ, առ ի տեսնել և ուրախանալ քեզ այլու եւս. զի ահա տիպն զորին փոքր ինչ լաւազդյն է քան զաղօթից զրոց տիպն. որ այդպէս օր ըստ օրէ շատապէտ հաստատի ապարանն»։

Նոյն թղթով կ'իմացընէ, թէ ուրիշ ընտրելազյն տառից փորագրութեամբ և ձումամբ կը զրադին, որովք նորանոր հրատարակութիւնք պիտի ըլլային հետզհետէ, և տուաջինն Տօնացոյց մը։

* *

Տպագրական գործոյն ամենահարկաւոր նիւթերէն մէկն է նաև թուղթը։ Հազորգակցութեանց գուտարութեան համար՝ զրիթէ անկարելի էր Եւրոպայէն թուղթ բերել։ Անոր ալ զարմանը մտածեց Սիսէոն կաթողիկոս, թղթի գործարան մը հաստատել յէջմիածին, յարարատեան դաշտի, ուր առատութիւն է բամբակի և ջրոյ. ուստի յԵւրոպայէ հմտա արուեստագէտներ բերել տալով, 1774ին՝ տաճարին հարաւային կողմը ու անկէ բաւական հեռու՝ մեծ շէնք մը կառուցանելով, հոն զետեղեց թղթաշինութեան համար բերել տուած գործիները։

Թղթագործարանին ալ շինութեան առատամիտ բարերարն էր նոյն ուսումնասէր մատրասեցի Զարիկենց Գրիգոր, առ որ զրէ կաթուղիկոսն ի 1774։ «Յանցեալ Ռ.Մ.Ա. (1772) թառով եհաս առ մեզ թուղթ քոյ որ յաղազս թղթաշէն վարպետացն և այլոց յողովից իրակութեանց զրեալ էիր... իսկ մեք թղթաշինաց թուղթման՝ յետ հասանելոյն առ մեզ՝ շուտով յղեցաք ի մեծն Պոլիս առ մեր նուիրակ Զարարիա վարպետացն յղել անդ, որպէս և քեզ եւս զրեալ եմք. յառաջ, և նա ի վաղուց հետէ յղեալ էր և զրեալ առ մեզ։ Բայց պատասխանքն նոցին

մինչեւ ցայծմ տակաւին ոչ ընկալաք, զի զիտացուք թէ որպէս եղեն, զարօց են թէ ոչ եթէ զու զիամբաւ ինչ լուեալ իցեն ի նոցունց, մեզ եւս զրեալ՝ զի զիտացուք. ապա թէ չես լուեալ, եթէ կամիցիս վերստին զրեալ անդ, զի թերեւտ եկեսցեն»։

Կը ծանուցանէ զարձեալ, թէ ընկունած է չնորհակալութեամբ և օրնուութեամբ տպարանի կանկնան և հաստատութեան անհրաժեշտ ծախուց համար իր կողմանէ զրկած երեք հազար հարիւր և վեց սուկոյ գումարը. և թէ՝ տպարանի չէնըր փոքր ըլլալուն՝ պիտի ընդարձակել տայ, և զիխասոր դրան վրայ զնել՝ ի յիշատակ իրեն՝ այն արձանագրութիւնը, զոր ի վեր անզր մէջ բերինց։

Պարսկաստանի մէջ կային ի ժամանակին թղթի գործարաններ, ուսաի կաթուղիկոսն հմուտ կարծուած արուեստաւորներ բերել տուաւ, որ իր դիտած վախճանին չկրցան օպտակար ըլլայ։

Ցոյսը կարելով անսնցմէ, զրեց առ Զաքիեան Գրիգոր, ինչորելով որ ինք գոնէ թղթաշինութեան ճարտար և հոնուտ արուեստաւորներ։ Պարիսէն երկու գաղղիացիք եւ կած էին այն ասեններն ի Պոլիս, տեղեակը արուեստին, Աննոց հետ օրինաւոր դաշնակութիւն ընել տուաւ Զաքիենց, որ երթան յշխմածին թղթագործարան և թուղթշինելու, և հետերնին տանին այդ արուեստին հարկաւոր ամէն պարագայքը, աեղացի աշակերտներ ունենան և սորվեցնեն անսնց արուեստը, որպէս զի իրենց պայմանաժամն լրանալէն ետքը՝ կարենան զառանալ իրենց ուզած աեղը, և զործը աշակերտաց ձեղով շարունակի։ Ուտեստի և ուրիշ ամէն ծախուղերէ զատ՝ 14, 000 ուուրի վարձատրութիւն իսոստացեր էր իրենց, զնելով հետերնին նաև հայազգի թարգման մը։

Բայց այդ երկու եւրոպացիք, իրենց համար նշանակուած աեղը հասնելով, սկսան այլեւայլ գծուարութիւններ յարուցանել զրծածոյն սկզբնաւորութենէն, ու երկու տարիի գործը ձգձգելով՝ մեծ ծախսեր ընել տուին, առանց իրական արդիւնք մը ցուցնելու կաթուղիկոսն իրաւամբ նեղանալով իրենց բըռնած այս կերպին վրայ, վարպետներն իր

դիմացը կանեց, և պահանջեց գործարանը՝ զոր խոստացեր Էին շինել, Անոնք նեղը մանելով խոստավանեցան, թէ մաքերնին զրած են արուեստնին մէկու մը չսորվեցրնել: Երբ այդ պատասխանին վրայ ալ աւելի զսյրացաւ կաթուղիկոսն, ու փալախա բերել տալով սպառնացաւ զիրենք պատոհասել ու սառնասուն ձգել, զղալով խոստացան՝ որ վեց ամիս պայմանաժամ շնորհուի իրենց, որպէս զի յանձնառու եղած գործերնին կատարեն: Սիմէն կաթուղիկոս զիջաւ այդ ժամանակը շնորհել իրենց, ու վրանին հակող և տեսու զրաւ զիսահակ եպիսկոպոս Գեղարքունիք, որոց Հոգարաքութեամբ շոտով կառուցուեցաւ թղթաշինութեան գործարանն, և հարիսար եղած թուղթն սկսաւ հայթհայթել սպարանին:

Ան ամեն կաթուղիկոսն ձեռք զարկաւ սպազրել իւր հեղինակած Պարտավճուր կոչեցեալ զիրը, ու փոխազով հրատարակեալ առաջին թերթերն յղել առ բարերարն Զաքիկեան, ծանոյց իրեն միանգամայն թէ թղթազրութարանին վրայ 7800 պարսկական թուման ծախը եղեր է: իսկ նա նուիրատուութեանը նախընծայ արքասիքն տեսնելով գոհութեամբ, մէկէն յղեց այն գումարը առ հայրապետն Սիմէոն, և հետը շորս հարիս զոյց ընտիր յախճապակէ ըմպանակներ և ուրիշ անօթներ, որոց ամենուն վրայ սոկեգրով և հայերէն տառերով զրուած էին անոր անոնը որուն կը նուիրուէին ի բարի վայել, ի ՌՄԻԶ Հայոց թուին:

Սիմէոն առանձին զրութեամբ ծանոյց Գրիգորի գաղղիացի վարպետաներուն խարբւութիւնը, և թէ արուեստնին շուզեցին սորվեցընել աշակերաց, ինչպէս պարտականութիւն առած էին վրանին ըստ զահնագրին. բայց նոքա յաջողեցան, և իրենց վարպետներէն շատ լաւագոյն և ընտիր թուղթ շինեցին. և տպացոյց իր խօսքին՝ շորս թերթ թուղթ զրկեց առ նա, երկուքը առաջին շինութենէն, և միսերն երկրորդէն՝ աւելի մեծազիր. իմացուց նաև թէ թուղթը շինուած է Ծմիկածին անուամբ և նշանաւ. և խոստացաւ ինչպէս սպարանին՝ առանք նաև թղթազրութարանին վրայ արձնազրել բարե-

բարեին անունը: Զաքիկեան անգլիերենէ ի հայ հինգ օրինակ մուրհակազրի թարզմանելով, զրկեց առ կաթուղիկոսն. խողութով որ հայերէն լեզուն սրբազրեն և տպագրելով դարձընեն առ ինքն: Սիմէոն փոթաց կատարել ինողիրը, և միանգամայն հաղորդեց իրեն՝ թէ ի յիշատակ նորա բարերարութեան՝ Զրուարան և Տօնացոյց զրբեն ձրի բաշներ է եկեղեցեաց՝ առանց դրամական փոխարինութեան մը:

Ծմիկածնի թղթազրութարանին մէջ շինուած թուղթը մասնաւր նշան մը կը կրէր ամէն թերթերուն վրայ. մէկ կողմը նոյն սրբավայրին անուան փակագիրը, կաթուղիկոսին անուան և աստիճանին սկզբնատառից (Ս. կ.), և ի միւսն՝ բարերարին անուան Գրիգորի Միկայէլեան (Գ. Մ.) Զաքիկեան, սպարանին կառուցման հայկական թուակտնովը:

Անէկ յառաջ, 1774ին, տպազրեցաւ Տօնացոյցն, որ ընդհանրապէս կաթուղիկոսին անուամբը կը կոչուի, իրեն կարգաւորութիւնն ըլլաուլ. և վերջաբանին մէջ կը ստորազրէ կրածներն Ծմիկածնի սպարանին հասաւասութեանն համար. « Ահա հինգ ամ է, կ'ըսէ, յորս աշխատիմք և աքնիմք զի զարհեսաս զայս ի ձեռն բերցուց և հասաւասեցուց ի սուրբ Ալմոռով... զոր և հասաւասեցաց իսկ Աստուծալ: Յորում տպեցաք նախապէս զքանի համ սաղմնաս, որ զտիհասութիւնու շատ ունէր նկատմամբ տպեցմանս: Երկրորդապէս տպեցաք զփորձրիկ զիրը Ազօթից, և ևս փորձելոյ աղազաւ զպարազայս գործոյս. որ թէպէտ հասուն էր քան զՍաղմնան, սակայն և եւս ունէր զտիհասութիւնս ունան՝ որքան առ գործ այս: Ապա երրորդապէս տպեցաք զՃօնացոյց զայս, որ Աստուծով քան զնոսա հասուն է և կատարեալ: » Յիշատակարանին մէջ ալ մասնաւր բարար կը յանձնէ « զիահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացնորին, անձանձիր աշխատեցմամբ: Ծնդ նմին և զտիրացութարութիւնն Ծմիկածնեցի, որ է փորազրօն և օժանդակող բլուրից զրոց: պատկերաց, խորանաց, կանոնաց և այլոց ծաղկանշանից: նաև

ապօղ զրբոյս... Աքժանի է յիշման և Շօ-
ովթեցի Մկրտչի արդեպիսկոպոսն. որ իրու
նախկին հեղինակ եղա. գործոյս այսորդիկ՝ որ-
քան առ փորագրութիւնն ի պողովատեայս և
Նաեւ... Գրիդոր աղայն Զուզայեցի ի Հինտ
բնակեալ... Խօջաձանեան Զաքիկենց...
Քանզի գործս այս՝ բոլորովին պարագայիւրն
և բնաւիւք ծախիւքն վերոյիշեալ բարեպաշ-
ափ... յառաջանայ ձրիսպէս »:

* *

Էջմիածնի տպարանէն ընծայուած առա-
ջին երախայրիկին՝ Զքուարան կոչուած ա-
զօթից մասենիկին էր բախնք. յետոյ Տաղա-
րան մը, որոյ նախկին տպագրութիւնն տե-
սած չենք, և կ'երենայ թէ անարուեաս և
անհարթ տպագրութեանն համար մասնաւոր
զիտմամբ անհետ ըրած են. և տպագրատան
աւելի կարգաւորութիւն առնըլէն ետքը՝
1777ին, միւսանգամ տպագրած, ինչպէս
կ'ակնարիէ ի ճակատ գրոցն զրուած նորա-
գիրը. « Չարահիւսեցեալ ի Սիմէօնէ սրբա-
զան կաթուղիկոսէ ամենայն Հայոց յայլ և
այլ ժամանակու : Որոյ հրամանաւն այժմ ևս
տպեցաւ կրկին՝ ի սպառիլ առաջնոյ տպե-
ցելին, ի թախանձանաց սիրատարի ինդրո-
զաց... ի սուրբ աթոռն Էջմիածին, ի տպա-
րանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ »: Գրքին վերջն ալ. « Յիշեսոյիք ի Քրիստոս հաս-
տառողն տպարանին, և զամենայն աշխա-
տօպն որ ի ամա. և զհոգացողն ծախուց սորին՝
զջուղայեցի Խօջիխանենց Գրիգոր աղայն »:

1777 թուականին տպագրուած է Աջ-
միածին « Կարգ թաղման հայրապետաց, ե-
պիսկոպոսաց և քահանայից » մասնական
մաշտոցը, որոյ համար կ'ըստի ի ճակատուն,
« զոր ի բուն մաշտոցէն մերմէ տեեալ՝ սրբ-
բագրեալ և կարգաւորեալ տեառն Սիմէօնի
գերերանիկ և գիտնական կաթուղիկոսի ա-
մենայն Հայոց, ետ տպագրել մեծաւ զու-
շութեամբ, ինքնին խկ լինելով վերակա-
ցու : Խօհրկաւոր փայտափոր պատկերներ
ալ անի, վերաբերութեամբ առ Մասիս
լեան և առ աթոռն հայրապետական, մեր
արևելեան առաջին տպագրութեանց մէջ :

զրեթէ անհրաժեշտ և սովորական անարուես-
տութեամբ :

* *

Ինչպէս ըսինք, Սիմէօն կաթուղիկոս Էջ-
միածին տպարանն և թղթագործարան հաս-
տատելէն ու բարեկարգելէն ետքը՝ տպագրեց
Պարտավճար զիրքը, որոյ տպագրութիւնն
թէպէտ իր օրովը պատա, բայց չիրցաւ տես-
նել անոր լրանալը և հրատարակութիւնն,
ինչպէս կ'ակնարիուի ի յիշատակարանին...»

« Գիտելի է, կ'ըսէ, զի յօրինողն տառիս
աւել Սիմէօն յոգնաձան կաթուղիկոս ի ՌՄիլ
թուղն մերում աւարտեաց զայս, և պար-
զագուցուցեալ են ի տպագրութիւնն... Սա-
կայն ոչ յաջողեցաւ նմա յայնմ ժամանակի
բոլորապէս տպեցուցանելւ Քանզի յետ ա-
ռաջնոյ հատորի տպեցման... անկաւ ի ցա-
ւազին հրաւագութիւնն... պատուիրեաց հո-
գեծին սորուց և աշակերտաց իւրոց զկնի
վախճանի իւրոյ զմնացորդն զրոց տպեցու-
ցանել... իսկ ի յուղիսի իզ (ՌՄիթ) փո-
խեցաւ ի կենաց ասաի և իւ զկնի տնօրին-
մամբն Աստուծոյ յաջորդեաց զաթոռոս սուրբ
աւել Պավկաս... հրամայեաց այլ եւս թարց
յապաշման տպեցուցանել. և կատարեցաւ ի
թուղջ փրկին ՌԶԶԳԴու...»:

Այս թուականէն ետքը քանի մը տարի
կը զալիքին տպագրական հրատարակութիւննց
յիշմիածինն, զէթ մեր քով եղած գրացու-
ցակաց համեմատ, ցամեն 1787. յորում կ'ե-
րեւնայ թէ տպարանն արուեստական նոր
կազմակերպութիւնն և փոփոխաթիւններ կը
կրէ. զի ի յիշատակարանի Ցովսեպոսի գրոց
պատութեան, որ նոյն ատարոյն մէջ ար-
պուեցաւ, իրկին յիշատակութեան կը յան-
ձնուի, « Կերտողն զրոց և կանոնաց և ծաղ-
կանշանից, վարպետ Յարութիւնն Վաղարշա-
պատցի », որ կ'երեւնայ թէ սր ըստ օրէ
աւելի կը յաջողէր յիւրում արուեստի. լասն
զի այս տպագրիս մէջ՝ թէ ըստ տառից և
թէ ըստ թղթոյն, համեմատական շատ ա-
ւելի արուեստ և ընտրութիւն կը նկատուի,
քան նոյն գործարանէն նախընթացարար ըն-
ծայուածներուն մէջ :

* *

Հայոց նորազոյն պատմութեան տիսոր էլերուն վրայ ակնարկ մը միայն ձգողը՝ յայտնապէս կը տեսնէ, թէ ինչպէս անցեալ դարուն վերջերը և ներկայիս քառորդին մէջ Էջմիածնի վանաց վիճակը շատ զժուարին զիրք մ'ունէր, որպէս զի կարենայ տապագրութեան զործով զբաղիլ և զբաղեցընել. մինչ իր միաբանք՝ և ոչ իսկ նիւթական քիլ մը հանգստ վիճակ կրնային ունենալ իրենց բազմադրեան բնակութեան մէջ, որ ձեռքէ ձեռք անցնելով նշանակ և նպատակ դարձած էր բռնութեանց, և նեղին հալածանաց : Մրգայն Գրիգորի յաջորդցն ալ՝ կարծես թէ տապագրական զործէ աւելի կարևորագոյն զբաղմունք մը կը համարէին գոտած ըլլալ : — Գէթ այսպէս ենթաղել կու տան Աղանեան և Երիշեանց այն ժամանակաց վրայ խօսող իրենց վերջին հրատարակութիւններով :

Կը հանինց մինչև Յովհաննու ութերորդի կարեցւոյ հայրագետութեան ժամանակ, յորում Երիքին քաղաքական զիրքը մեծ յեղափոխութիւն կը կրէ, և հետը նաև Էջմիածնի վանքն, ուր զանազան ուրիշ բարեկարգութեանց հետ կը մնածոք նաև տպարանի վերաբացման և գրական զործունք ութեան համար աշխատիլ : Միաբանից մէջ կ'երևանան անձնինց որ եռանգետամբ կու տան ինքզինքնին ուսումնակրութեան և ուսմանց, որոց մեծապէս խրախուսիլ և օժանդակ կ'երևանայ կարեցւոյն անմիջական յաջորդը՝ Ներսէս Եղանակացի : Այսպիսի եռանզուն փոխոյ առաջին և զովելի արդասիլ կ'ըլլայ Շահնաւթունեան Յովհաննէսի վարդապետի Ստորագրութիւն սրբութեան արքոյ Էջմիածնի կոշտուած երկինատոր հմտու և հմտացուիլ երկասիրութիւն, տպագրեալ ի 1842 :

* *

Էջմիածնի ուսումնական ներկայ բարգաւաճանաց և յառաջադիմութեան սկզբնաւորութիւն Մատթէոս Ա և Գէորգ Դ կաթու-

ղիկոսի զահակարութեան ժամանակն համարելու որ ըլլանք, ազգին մեծապայն մասին զգացման համեմատ կ'ենթաղենք խօսիլ և զրել :

Ժամանակից փոխուած էին . իր նախարարներէն Ներսէս՝ կովկասու զինաւոր քաղաքին, Տիգիսու մէջ մեծ զպրատուն մը բացեր, մինչև Եւրոպայէն ուսուցիչներ բերել առուել էր, որպէս զի իր թեմին մէջ կրթութիւնն և ուսմունք ծաղկին : Համալսարան և հոչականուն վարժոց մը տրիէն հասաւատուած էր ի Մովուա, Լազարեան տանմին առատամու և առատաձենն արուց, դոր Ռուսաց պետութիւն իր հոգոր պաշտապանութեան ներքեաննելով, նախնարար ազգին ընծայած բարերար արդեանց բազմապատիկը կը խոստանար և կը յուսացընէր . նոյնպէս ի Պետերբուրգ մայրաքաղաքին, ի Նոր Նախիջևան, ի Թէոդոսիա և այլուր հաստատուած առաջնակարգ վարժարանք և զպրոցք, իրենց մեծ ազգեցւութիւնն ըրած էին Ռուսիաբնակ ազգայնոց վրայ, լաւագոյն ապագայ մը խոստանալով :

Այդափ եռանգետամբ ուսման հետևող ազգին համար՝ կրթութեան և զիտնական ուսումնականութեան համազօր և հաւասարաքայլ կղերի մը կարօտութիւնն իմացիր էր Գէորգ հայրապետ, որ թուրքից մայրաքարէն կու գար՝ բազմիլ կաթուղիկոսական աթոռոյն վրայ, և ուր արդէն իր աշքին առջի, իր պատրիարքութեան օրով կը յանախէին զպրոցք, վարժոցք, լսարան, թատերք . ամէնքն ալ՝ եթէ իրենց օրինաւոր սահմանին մէջ ման ու զործեն, մէյմէկ զօրաւոր շարժակիթք, հնարք և միջոցք զարգացման :

Գէորգայ ընտրութիւնն եղաւ ի 1868 . և յաջորդ տարին մեկնեցաւ յէջմիածնին : Առաջին մասածութիւնն եղաւ տպարանական զործով զբաղիլ և բանալ կրկին ի վայելս հեռաւոր և մերձաւոր ազգայնոց լուսայ և ուսմանց չէնքին այն զաներն՝ ուստի ամէնքն իրաւամբ լոյս և ուսումն կը պահնջէին : Այս վայնանաւ ետևէ եղաւ յորդորել միաբաններն ուսումնական և կրօնական հանդիսի մը, Արարատ լրագրին, հրատարակութեան ձեռք զարնել, որ ցայսօր կը շարունակուի անընդհատ :


Այդ պարբերականին առաջին թիւերը ձեռք առնողներն, զրեթէ քառասուն արիներէ եացը, անշուշտ շատ թերակատար պիտի գտնեն զանոնց, մանաւանդ արուեստական տեսակիտով։ իսկ այսօրուան թերթերն ակնարկած ատեն՝ պիտի աեսնեն թէ ամենայն ձեռնարկ, մանաւանդ մեզ նման ազդի մէջ, միշտ պատիկէն կ'առնուն իրենց սկզբնաւորութիւնը, ինչպէս և մնութեան ամէն արտադրութիւնը։ և թէ ժամանակն ու ջանքն են՝ որ իրարու ձեռք ձեռքի տուած կը գործեն ամեն յառաջադիմութիւն։

Նոյն վախճանաւ հաստատեց հայրապետն իր անունը կրող մեծ վարժարանն յ'իջմասն, ուստի ամ ըստ ամէ կ'ընծայուին ազգին գիտուն հոգեւորականութիւն և աշխարհիկ ուսուցիչը, կրթիչը և դաստիարակը ազգին ապագայ սերնդեան։

Իր յաջորդն Մակար Ա. ի հիմանց փառաւոր պատրան, ձուլարան և այլ կարեւոր պարագայքն կառոյց և հոգաց, ազգաւոր և քարերար անձանց դրամական օժանդակութեամբ, որոց անուան փառքն՝ գործոյն օգտակարութեանը մէջ է, և երախտապարտ ազգին շորհակալութիւն՝ յաւերժական արձան՝ յիշատակի։


Իսկ արդի հայրապետան, անուամբն և սըրտիւ ստուգիւ Հայր իր հոգեւոր խնամոցը յանձնուած սիրելի ժողովրդեան, հայրապետութեան առաջին օրերէն՝ ընտիր ամենազդի տառեր ստացաւ ի Միսիթարեանց վիճնայի, և նոր կերպարանը մը տուաւ թէ Արքարատ լրագրին և թէ որիշ տպագրեալ զրոց, օգտակարը ջանալով միաբանել ընդ գեղեցկին և ճաշակաւորին։

Հարայարելի



ՊԱՏԿԵՐՈՒԽՈՅՑ ԳԻՐՔ

(Տես յ'էջ 385)



83. Այս երեսիս վրայ պատկերքն գունաւորեալ են գեղնակարմիր, բայց քիչ, շատ մաշած։ յաջ կողմէն տան կամ աւելի անձանց խումբ մի կայ, որոց շատին միայն զլուիք զծագրեալ մօրուաւոր կամ անմօրու են։ երկու կամ երեքն միայն ամրող և զանաւոր։ ասանց դիմաց միւս երեսին եներքին՝ գունաւոր մէկ մի, որոյ ձեռաց ինչ կիրք ունենալն յայտնի չէ։ Այս երկու եներք մէջ անձ մ'այլ կայ շատ նշանաւոր զիքըով։ պատմուհանին ստորոտն կ'երեւի ճերմակ մնացած, վերարկուն նեղ և երկայն մէկ թեւէն կախուած։ զլուիք սեւցույեր են, վիզը ծուած, թեւերն այլ գինէն վեր այնպիսի կերպով բարձրացուցած, որ յուսահատութիւն և ողբալ երեւցընէ։ միթէ Երեմիամարգարէ։ Պատկերի վերեւն այլ երկու մեծ զլուիք կան սեւանկարք, մին մօրուօք, միւսն կլորակ անմօրու, բաւական ազդեցիկ։ (թիւ 25)։

84. Նշանաւոր է և այս պատկերս, որ ներկայացընէ Խորայեացոց յանապատին նուազին ծարաւով։ Մովսէ կապոյտ կանաչ զգեստուք և զեղին լոդկաւ կ'երկընցընէ զգաւագանը ի վէմի, որ ննջուած է։ ի ձախ կողմէն երկայնամօրուու աղաշաւոր մի կայ, զեղին վերարկուաւ։ յաջիողմն այլ կէս զեղնադոյն և այլ անգոյն ծարաւիք՝ աղաշաւոր ձեռօք։ Գարս այլ սեթ նշոյնալիք։ յորց մին կանաչ գունաւորած է, փոքր մօրուօք, և նայի դէպի ի Մովսէս, ի զիրեկն առած կիսանուազ աղջիկը կամ տղայն։ Երեսին մէկ անկիւնում այլ մեծկակ թեւի գծանկար մի կայ։

85. Այս պատկերս այլ նշանաւոր է։ մէկ կողմում կան տասնիւ շափ զլուիք արանց և կանանց, որոց դիմաց չորս ամբողջ կանուն կերպարանք՝ պէսպէս գունաւորեալք։ ասոնք այլ աղաշաւոր թուին առ կարմրազգեստ մէկ մին որ կեցած է ի միւս կողը, և ա-